

# ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՏԱՆԱՅԻ ՄԷՉ

## 1. ՅԱՐԱԶԱԲԱՆ

Ներկայ համագումարին մասնակցելու հրաւերը անակնկալ մըն էր ինձի համար: Որպէս ոչ մասնագէտ, տատամնումի երկար ժամերէ ետք որոշեցի դրական պատասխանս փոխանձել Նարեկ Սրբազանին, հետեւեալ երեք հիմնական պատճառներով.

Ա. Առնուազն չորս դարերու անցեալ ունեցող Ատանայի Պուլտուխեցն ընտանիքէն սեռած ըլլալու հանգամանգս, ըստ 1666 թուականին, Բարձրբերդի Աւետարանին յիշատակարանին մէջ արձանագրուած գրաւոր փաստին: Ինչպէս նաեւ՝ 1909-ի Ատանայի ջարդին առաջին երկու մահատակներուն կողքին, յետ ջարդերուն, կախադան հանուած վեց գոհերէն երեքը ըլլալով՝ Պուլտուխեան երիտասարդներ:

Բ. Համագումարը առիթ մը կրնար ըլլալ աւելի մօտէն ուսումնասիրելու պատմական ժամանակաշրջան մը, իր իրագործումներու հպարտութեամբ ու եզակի դրախտավայրին կորուստին ողբերգութեամբ:

Գ. Որպէս ատանացի, յարգանքի խօսքս ուղղելու «Ատանայի Հայոց Պատմութեան» ողբացեալ խմբագիր Բիւզանդ Եղիայեանին, խմբագրական կազմի անդամներուն ու անոնց աշխատակիցներուն, իրենց տասնամեակներու վրայ երկարող անխոնջ աշխատանքին համար, ինչպէս նաեւ՝ Ատանայի Հայրենակցական Միութեան անցեալի ու ներկայի կազմերուն որոնք հայկական Ատանայի յիշատակը վառ կը պահեն:

Կենթադրեմ «Հայութեան ներկայութիւնը Ատանայի մէջ» խորագիրը, կրնայ ընդգրկել ամբողջ Կիլիկիան, նկատի առնելով Ատանայի պատմական ու տնտեսական կարեւորութիւնը, ինչպէս նաեւ այն հանգամանքը որ Օսմանեան կայսրութեան վերջին շրջանին Ատանան եղած է կեդրոնը՝ համանուն վիլեյէթին, պատմական Կիլիկիոյ աշխարհագրական սահմանով, ունենալով հոծ հայկական բնակչութիւն:

Այլ ժողովուրդներուն նման, մեր հնագոյն պատմութիւնը եւս առասպելներու ու պատմական յիշատակութիւններու վրայ հիմնուած իրողութիւն մըն է թէ մեր նախահայրերը, հազարամեակներու ընթացքին բնակած են Արարատեան բարձրավանդակէն մինչեւ Միջերկրական Ծով երկարող տարածքին մէջ, երբեմն տիրապետելով ու շատ յաճախ՝ ուրիշներէն տիրապետուած:

Կիլիկիան մասնաւոր կարեւորութիւն ունի Հայոց պատմութեան մէջ: ԺԱ դարու կիսուն, Բագրատունեաց Անիի անկումէն վերջ Կիլիկիոյ մէջ է որ վերականգնեցաւ հայկական թագաւորութիւնը, երոպական երկիրներու հետ մշակելով սերտ յարաբերութիւններ՝ զինուորական, օրէնսդրական, վարչական, առեւտրական ու մշակութային մարզերուն մէջ:

Հայկական գահը երեք դարեր պահպանուելէ ետք, ԺԳ դարու վերջին քառորդին, Կիլիկեան Թագաւորութեան անկումով, կորսուեցաւ նաեւ՝ հայ ցեղին պետական անկախութիւնը:

Ապա՝ վեց հարիւր տարիներու օտար տիրապետութենէ ետք, ԺԹ դարու վերջաւորութեան, դարձեալ Կիլիկիոյ մէջ էր որ ծնաւ հայ ժողովուրդի ինքնավարութեան վերահաստատումի յոյսը: Առաջին համաշխարհային պատերազմէն ետք, Կիլիկիան որպէս առանձին շրջան, մնաց երոպական պետութիւններու հոգատարութեան ներքեւ, ձգտելով՝ անկախութեան:

Սակայն քանի մը տարիներ ետքը, դարձեալ Կիլիկիայէն է որ հայ ժողովուրդը զանգուածային գաղթի ենթարկուեցաւ, կազմելով Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկայի Սփիւրքահայ գաղութներուն էական տարրը:

## **2. ՊԱՏՄԱԿԱՆ**

### **2.1. Աշխարհագրական դիրք և արժեք**

Ըստ իր աշխարհագրական առանձնայատկություններուն, Կիլիկիան կարելի է բաժնել երեք շրջաններու. ծովեզերեայ, դաշտային ու լեռնային: Անոր ընդհանուր տարածքը՝ Լեւոն Մեծագործի շրջանին եղած է 45,000 քառ. քիլոմէթր:

Կիլիկիոյ սահմանները պաշտպանուած էին ծովային ու լեռնային բնական ու անառիկ բերդերով: Շրջակայ երկիրներէն կարելի էր Կիլիկիոյ դաշտային շրջանը հասնիլ անցնելով միայն՝ հինգ լեռնակիրճ անցքերէն, որոնք կը կոչուէին «Կապանք Կիլիկիոյ» կամ «Դուռնք Կիլիկիոյ»:

Կիլիկիոյ ընդհանուր տարածութեան կէտը կը կազմէր դաշտային հողամասն ու լեռնային շրջաններու ստորտը տարածուող բլրախառն բարձրաւանդակներն ու ձորերը: Սակայն իսկական Կիլիկիան լեռնային շրջանն էր, հայ պատմիչներու կողմէ կոչուած «Գահ Կիլիկիոյ», Տաւրոսեան, Անդր-Տաւրոսեան ու Ամանոսեան լեռնաշարքով պաշտպանուած ուր Ռուբինեան իշխանութիւնը հաստատուելէ ետք, տարածուեցաւ նաեւ դաշտային ու ծովային Կիլիկիոյ շրջանները:

### **2.3. Ք.Ե. Առաջին հազարամեակ**

Նախա-Ռուբինեան շրջանին, Կիլիկիան մեծ մասով արդէն իսկ բնակուած էր հայերով, Տիգրան Մեծի ու Պոմպէոսի շրջանէն իվեր: Մովսէս Խորենացին Կիլիկիան կը յիշէ որպէս Հայոց ընտանի երկիր:

Բազմաթիւ պատմական տուեալներ կը փաստեն թէ հինգերորդ դարուն սկիզբը, հոծ հայկական բնակչութիւն մը գոյութիւն ունէր Կիլիկիոյ մէջ, բիւզանդական կայսրութեան գերիշխանութեան ներքեւ, հայ կառավարիչներու տեղական վարչութեամբ:

Կիլիկիոյ բնակչութեան հայկական դիմագիծին մասին, Ժ. դարու սկիզբը տեղեկութիւններ կան նաեւ Յովհան Ռակէրեան Հայրապետէն, որ Կիլիկիան կը կոչէ «Հայաստան» ու ժողովուրդը «Հայեր»:

Հայ, բիւզանդացի ու արաբ պատմիչներ բազմաթիւ առիթներով յիշած են դէպի Կիլիկիա Միջին դարերու հայ գաղթականներու հոսանքի դրուագները ու Ը - Ժ. դարերուն Բիւզանդիոնի գահը պիտի բարձրանային հայ գորավարներ: Նաեւ՝ Ժ. դարուն Խաչիկ Կաթողիկոս, յարմար նկատած էր առանձին եպիսկոպոսներ նշանակել՝ Անտիոքի, Տարսուսի եւ այլ գաւառներու համար:

### **2.3. Ք.Ե. Երկրորդ հազարամեակ**

Ռուբէն Իշխանի առաջնորդութեամբ, 1080 թուականին, անջատ հայ իշխանութիւններ կազմեցին Կիլիկիոյ Ռուբինեան Թագաւորութիւնը որ պիտի տեսէր մինչեւ 1375, Հէթումեանք եւ ապա Լուսինեանք անուններով: Այդ ժամանակաշրջանին, հայ ժողովուրդի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ունեցանք 300 քլմթ. երկարութեամբ ծովեզերեայ սահման մը ու հայկական տառերով ոսկիէ, արծաթէ ու պղինձէ դրամներ:

Ռուբինեանց Թագաւորութեան շրջանը եղաւ պետական կեանքի ու մշակոյթի բեղուն ժամանակամիջոց մը իր Երուսական ու միջազգային յարաբերութիւններով, իր բարգաւազ տնտեսութեամբ, ազգային, ընկերային ու կրօնական հաստատութիւններով եւ մանաւանդ՝ մշակոյթի, գրականութեան ու արուեստի ստեղծագործութիւններով:

Մելնուզեան եւ Եգիպտական արշաւանքներու հետեւանքով՝ Սիւ Մայրաքաղաքի ատերումէն ետք, ժամանակի մը համար, Ատանան վերածուեցաւ թագաւորանիստ մայրաքաղաքի:

Երեք դարերու հերոսական պայքարներէ ետքը, քիզանդական կայսրութեան, սելճուզ ու քիւրքմէն արշաւանքներու, խաչակիրներու եւ մէմլուքներու հարուածներուն տակ՝ քայքայուեցաւ Կիլիկիոյ թագաւորութիւնը ԺԴ. դարու վերջին քառորդին, եւ այնուհետեւ մնաց օտար իշխանութեան լուծին տակ:

1832-1840, Եգիպտոսի Մէհմէտ Ալի Սուլթանի իշխանութեան տիրապետութիւնը Կիլիկիայէն հեռացնելէ ետքը, Օսմանեան կառավարութիւնը, բարեկարգիչ Սուլթաններու օրով, վերակազմեց Ատանա Նահանգի պետական վարչաձեւը:

1840-1918, Կիլիկիան վերածուեցաւ առանձին Կուսակալութեան մը, «Ատանա Վիլայէթի» անուան տակ: Այսպէս սահմանուած, Ատանայի Նահանգի ընդհանուր տարածութիւնը կը համապատասխանէր մօտաւորապէս պատմական Հայկական Կիլիկիոյ տարածութեան, 45,000 քով. քմ., դուրս ձգելով Սեւ Լեռներու հիւսիսային շրջանը, Մարաշ, Այնթապ եւ Չէլթուն:

Ըստ 1912-ին Կոստանդինուպոլսոյ մէջ հրատարակուած տուեալներու, Կիլիկիոյ – այսինքն Ատանայ նահանգէն բացառելով Մարաշն ու Այնդէպը – բնակչութեան թիւը 400,000 էր, որոնց 215,000 Քրիստոնէայ «Հայ, Յոյն, Քաղկեդոնացի, Ասորի, Սուրիացի ու Մարոնիդ» եւ 185,000-ը Մահմետական «Արաբ, Թուրք, Թաքար, Քիւրտ ու Չերքէզ»:

### 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ատանա, Մամեստիա եւ Տարսոն քաղաքներուն ծովուն մօտ ըլլալու պատճառով, Կիլիկիան Թագաւորութեան երեք դարերուն, անոնք եղան վաճառականութեան կեդրոններ, Միջերկրականեան ափերու եւ Ասիական երկիրներու միջեւ: Ու ցամաքային ներքին սահմաններուն վրայ, Կիլիկեան Լեռներու «Հինգ դռներու» կապանքին կանգնած բերդերը միանգամայն կը ծառայէին որպէս մաքսատուներ՝ ծովեզերք փոխադրուող Ասիական ապրանքներու եւ փոխադարձաբար ծովեզերքէն դէպի Ասիական երկիրներ փոխադրուող Միջերկրականեան ապրանքներու:

Մանաւանդ ԺԲ, դարու վերջը, Երուսաղեմի Խաչակիրներու Իշխանութեան քայքայումէն ետք՝ Երուսաղի եւ Ասիական հողամասերո միջեւ առետուրը սկսաւ անցնիլ Հայկական Կիլիկիոյ մէջէն որպէս ապահովագոյն կայան Ճենովացի, Սիկիլիացի, Պիզացի, Ֆլօրէնցիացի, Գաթալանցի եւ Վենետիկցի վաճառականներու: Լեւոն Բ, Մեծագործի շրջանին, Ճենովացիք իրաւունք ունէին իրենց հաստատութիւնները ունենալու Միսիսի, Ատանայի եւ Տարսոնի մէջ, ինչպէս նաեւ կառուցելու իրենց եկեղեցիները նոյն վայրերուն ու նոյնիսկ Միսի մէջ:

Փոխադարձաբար, նոյն շրջաններուն, Հայեր եւս կ'երթային երոսաղեմ քաղաքներ, տարածելու համար իրենց վաճառականութիւնը, ու այդ քաղաքներուն մէջ Հայ-Տուներ, հոգեւորներ ու եկեղեցիներ շինելու իրաւասութիւնը կը ստանային:

### 4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Պատմութեան ընթացքին՝ Ատանան՝ Փոքր Հայքի հարիւրաւոր քաղաքներու շարքին, պարզ քաղաք մը չէ եղած, այլ՝ ամբողջ շրջանի մը մայրաքաղաքը:

Կիլիկիոյ մէջ գրի առնուած Չեռագիրներու Յիշատակարաններուն մէջ, ԺԳ. դարէն սկսեալ, Ատանան կը կոչուի «Քաղաք Մեծի Կիլիկիոյ», «Մայրաքաղաքն Կիլիկեցոց Ատանա» եւ «Մայրաքաղաքն Ատանա Տիանու», շեշտելով անոր դիրքն ու կարեւորութիւնը Կիլիկիոյ մէջ:

Մինչեւ ԺԸ-ԺԹ Դարերը, Հայ դպրութիւնն ու դպրոցը առընչուած էին վանական դրութեան հետ՝ որոնք ընդհանրապէս հաստատուած էին լեռնային մեկուսի ու ապահով շրջաններու մէջ:

Առանձին պաշտօնական դպրոցներն զատ, Առանան շրջապատող լեռնաշղթային մէջ, Լամբրոնի եւ այլ վայրերու մէջ, իշխաններ իրենց զաւակներուն կրթութեան համար ունէին յատուկ «դաստիարակներ», ապագայ իշխանական կամ կրօնական պաշտօններու պատրաստութեան համար:

Հայերը, թէւ գաղթական, կարճ ժամանակի ընթացքին Կիլիկիոյ մէջ հասան քաղաքակրթական այնպիսի աստիճանի մը, որով կրնային բաղադատուիլ ժամանակակից ամենէն զարգացած պետութիւններու հետ:

#### 4.1. Լեզու եւ երաժշտութիւն

Հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններուն, Առանայի մէջ, ուրը հարիւրէ աւելի հայերէն բառեր պահպանած են իրենց աղաւաղեալ բայց բնիկ, հին ձայնական հնչումը: Հետաքրքրական է նշել թէ այդ բառերը շատ աւելի կանանց խօսակցութեան մէջ գործածական եղած են, իսկ ընտանեկան շրջանակի մէջ Հայերէն լեզուի գործածութիւնը Առանայի մէջ շարունակուած է դարեր շարունակ, հակառակ պետական խիստ հալածանքներուն:

Սակայն՝ Առանայի Հայերուն գործածած առօրեայ լեզուն եղած է Թրքերէնը: Հարսանիքներու ու խնճոյքներու ընթացքին երգած են *շարքիներ* ու *թիւրքիներ*: Թէւ դպրոցներու մէջ միայն Հայերէն երգեր կը սորվեցնէին, սակայն այդ երգերը կ'երգուէին միայն՝ դպրոցադան հանդէսներու ու տօնական առիթներով: 1908-ի Սահմանադրութեան հռչակումէն ետքն էր որ Հայ Երգը սկսաւ ազատօրէն հնչել:

1920-ին կազմուած է «Առանայի Նուագասիրաց Միութիւնը», նպատակադրելով երաժշտասէրներով կազմել նուագախումբ մը եւ տարածել դասական երաժշտութիւնն ու քաջալերել երաժշտութեան տաղանդ ունեցող պատանիները: Այս շարքին կարելի է յիշել անունները՝ Համբարձում Պէրպէրեանի, Վահան Պէտեղեանի, Մանուկ Բարիկեանի, Ալան Յովհաննէսի եւ Վարուժան Գանթարճեանի:

#### 4.2. Կրթական մարզ

1850-75 սահմանադրական բարեփոխողական շրջանին, Առանայի կրթական մարզին կազմաւորումը կը քաջալերուի Ազգային Առաջնորդարանի ու երեւելի անձնաւորութիւններու կողմէ: Քաղաքի եկեղեցիներուն կից, Առաջնորդարանի հովանաւորութեամբ կը ստեղծուին քանի մը սեմնակնոց թաղային դպրոցներ, որպէս ուսուցիչ ունենալով քահանայ եւ վարժապետ-դպիրներ:

Առանայի Ս, Աստուածածին եւ Ս, Ստեփաննոս եկեղեցիները շինուած էին 1840-թուականներուն: Ս. Աստուածածին եկեղեցին ունէր երկյարկանի վարժարան մը, մէկ սրահով: Ս, Ստեփաննոսը ունէր միայնակ վարժարան մը՝ նոյնպէս մէկ սրահով: Իւրաքանչիւր դպրոցին մէջ կ'ուսանէին 200-300 աշակերտներ: Պետրոս վարժապետի շրջանին, 15-20 աղջիկներ ալ կը յաճախէին դպրոց, Ս. Աստուածածին Եկեղեցոյ վարժարանին մէջ այդ նպատակին յատկացուած մասնաւոր դասարանի մը մէջ: Գրասեղանի դրութիւնը Պետրոս վարժապետի օրով մտած էր Վերի Եկեղեցիին վարժարանը: Իսկ Վարի Եկեղեցոյ աշակերտները ծալապատիկ կը նստէին գետինը բազմոցներու վրայ, որ իրենց տուներէն կը բերէին-կը տանէին: Դասագիրքեր չկային: Ամէն մէկուն ձեռքը տրուած կ'ըլլար ընթերցանութեան գիրք մը՝ - Պզտիկ Մաղնոս, Մեծ Մաղնոս, Գործք Առաքելոց եւ Նարեկ:

1870-ական թուականներուն՝ կը բացուին անհատական եւ ապա կրթասիրական միութիւններու կողմէ մատակարարուած դպրոցներ, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական Յարանուանութեանց եւ Ֆրանսական ու Ամերիկեան Միսիոնարութեանց դպրոցները:

Առանայի կրթասիրական ընկերութիւններու մեծագոյնը եւ ամենէն երկարատեւը պիտի

ըլլար Արգարեան Ընկերութեան հիմնած դպրոցը, որ 1878-էն իվեր կը շարունակէ իր առաքելութիւնը, Կիլիկիոյ պարպումէն ետք, Պէյրութի Նոր Ատանա Թաղի Ս. Աստուածածին Եկեղեցոյ կողքին: Սկզբնական շրջանին վեց հարիւր աշակերտ ունենալէ ետք, Լիբանանահայ բոլոր վարժարաններուն նման, վերջին տասնամեակներուն, կը դիմագրաւ սաստկացող դժուարութիւններ ու աշակերտութեան թիւի յարատեւ նուազում:

Մասնաւոր վարժարաններէն, «Կիլիկեան Վարժարան»ը, Ատանայի կրթական բարեգարդումի շարժումին նպաստելէ ետք, նոյնպէս երկար տարիներ շարունակած է իր առաքելութիւնը Պէյրութի Նոր Ատանա թաղին մէջ ու դժբախտաբար, այժմ՝ փակուած:

Ազգային Սահմանադրութեան հռչակումէն մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը, 1861-1908 յիսուն տարիներու ընթացքին, Ատանայի մէջ հիմնուած են 25-է աւելի կրթական ու մշակութային Միութիւններ:

### 4.3. Ճարտարապետութիւն

Կիլիկիոյ հայկական բերդերը, Հայերու պատմական ներկայութեան ամէնէն հաստատուն, մնայուն ու յատկանշական իրագործումներն են: Հիմնուելով հարուստ շինարարական ասանդութեան մը վրայ, ԺԱ.-ԺԳ. դարերուն, իրենց բոլորածեւ ոճով, կը նկատուէին յառաջադէմ, բաղդատմամբ Եւրոպական երկիրներու քարակուսի ձեւերուն: Բնական արգելքներով պաշտպանուած, անառիկ բարձունքներու վրայ տեղադրուած, իրենց մեծածաւալ ու բարդ կառուցուածքով անոնք կը նկատուին Կիլիկիան Հայաստանի ստեղծագործութեան կարեւորագոյնը:

### 4.4. Մանրանկարչութիւն

Խաչակրութիւնները, Արեւմուտքի հետ ուղղակի յարաբերութիւն ունենելու առիթներ պիտի ստեղծէին ու կրելու՝ մշակութային նոր ազդեցութիւններ: Պարսկական, Ասորական, Բիզանդական ու Արաբական մշակութային յարաբերութիւններէն ետք Հայեր կարելիութիւնը պիտի ունենային Եւրոպական Լատին դպրութեան ու մշակոյթի էական տարրերը իւրացնելով, զարգացնելու համար սեպիական այլապէս հարուստ մշակոյթին գրչագրական, դպրական մանրանկարչական ու երաժշտական մարզերը:

Կիլիկիան շրջանի մանրանկարչութեան անմահները կը մնան՝ Թորոս Ռոսլինը եւ Մարգիս Պիծակը:

## 5. ԱՏԱՆԱՅԻ ՋԱՐԴԸ – 1909

1909-ի Ատանայի Ջարդը, ներկայ համագումարին խորագիրն ըլլալով պիտի ներկայացուի առանձին զեկոյցով: Սակայն՝ պիտի փափաքէի Նիւ Եորք Թայմզ օրաթերթի Ապրիլ 23, 1909, համարէն թարգմանաբար փոխանձել, հետեւեալ կարճ բայց շատ յատկանշական տեղեկութիւնը՝ ջարդերուն պատասխանատուութեան առնչութեամբ.

*«Ատանայի Ջարդերուն հետաքննութեան վերաբերեալ Երիտասարդ Թորքերու ներկայացուցիչներուն տեղեկագրին մէջ գոհացուցիչ խստութիւն մը կայ: Սակայն իսկութեան մէջ, ջարդերուն պատասխանատուներէն միայն տասներհինգն է որ կախահան հանուեցան: Մինչ՝ ըստ ամբաստանագրին թէւ արդար, սակայն հաւանաբար անգործադրելի, 800 ամբաստանեալներ եւս պէտք էր մահապատիժի ենթարկուէին, 15,000 ուրիշներ պէտք է դատապարտուէին տաժանակիր աշխատանքի ու 80,000 պէտք է կրէին մանր պատիժներ:*

*Այդ պիտի նշանակէր, դատապարտել շրջանին թուրք բնակչութեան մեծամասնութիւնը, որ անկարելիութիւն մըն էր տուեալ շրջանին:*

*Յանցանքը, ծայրայեղական ցեղախումբերէն աւելի պէտք է վերագրուի Թորք*

*պաշտօնատարներուն որոնք գրգռեցին կամ առնուազն թոյլատրեցին որ խժոժութիւններ կատարուին:»*

## **6. ԿԻԼԻԿԻԱՆ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՅԺԵՐՈՒ ԳՐԱՒՈՒՄԻՆ ՏԱԿ**

Առաջին Համաշխարհային Պատերազմին Օսմանեան Կայսրութեան պարտութեամբ, 1918 Հոկտեմբեր 31-ի, Մումտրոսի զինադադարի կնքումէն՝ մէկ ամիս ետք, կը կատարուէր Կիլիկիոյ գրաւումը՝ անգլօ-ֆրանսական ուժերու կողմէ: Ըստ յաւելեալ համաձայնութեան մը, ընդհանուր հրամանատարութիւնը իրեն կը վերապահէր՝ Հայերը իրենց երկիրը վերադարձնելու իրաւունքը ու անգլիական ընդհանուր հրամանատարութեան թոյլատուութեամբ, ֆրանսական իշխանութիւնները կը ձեռնակէին Պաղեստինի, Սուրիոյ եւ Միջագետքի մէջ գտնուող գաղթականները վերահաւաքել Կիլիկիոյ մէջ:

Կիլիկիոյ Հայութիւնը՝ բաղդատմամբ ներքին գաւառներու Հայութեան՝ աւելի մեծ թիով վերապրած ժողովուրդ ունէր, որովհետեւ իր գաղթականութեան ճանապարհը դէպի Սուրիա, Միջագետք ու Պաղեստին, բաղդատաբար աւելի կարճ էր ու զոհերու թիւը՝ նուազ:

1919-ի առաջին ամիսներուն, Կիլիկիայ կը վերադարձային մօտաւորապէս 120,000 Հայեր, տեղաւորուելով հետեւեալ շրջաններուն մէջ. Հաճին 8,000, Օսմանիէ 1000, Հասան Պէյլի 1,000, Իսլահիէ 1,000, Պաղէ 1000, Տէորթ Եոլ 22,000, Միսիս 1,500, Տարսուն 3,000-4,000, Մերսին 6,000-7,000, Ատանա 60,000, եւայլն:

Ատանան կը վերածուէր վրաններու տակ բնակող ներգաղթողներու առաջին կայարանին, մինչեւ որ՝ իրենց ուրոյն քաղաքներն ու գիւղերը վերադառնալու յարմար ու ապահով առիթը ստեղծուէր:

Միաժամանակ, Կիլիկիան կը նկատուէր արեւմտահայութեան համահաւաքման ժամանակաւոր հայրենիքը: Արեւմտահայոց Ազգային Պատուիրակութիւնը եւս, իր Փարիզի կեդրոնէն՝ նորահաստատ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան կողքին կանգնած, կը հաւատար թէ Կիլիկիան օր մը պիտի վերածուէր «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի մէկ անբաժանելի մասին:

Սակայն, Օգոստոս 10, 1920-ին, Սեւրի Դաշնագիրը, Կիլիկիոյ կէտը կը զիջէր Թուրքիոյ ու միւս կէտն ալ կը կցէր Սուրիոյ Ֆրանսական հովանաւորութեան տակ: Ու Հայկական Կիլիկիան կը զոհուէր ցարդ անիրագործելի, Ուիլսինեան քարտէսին փոխարէն:

## **7. ԱՏԱՆԱՆ ՊԱՐՊՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ**

Մուսթաֆա Քեմալի առաջնորդութեամբ, թրքական ազգայնամոլութեան արագ զարգացումով ու Ֆրանսական ուժերու անբաւարութեան պատճառով, Ֆրանսական քաղաքականութիւնը հիմնական փոփոխութեան կենթարկուէր:

Հոկտեմբեր 20, 1921-ին, Ֆրանսայի ներկայացուցիչ՝ Ֆրանքլին Պույոն, Անգարայի մէջ, Մուսթաֆա Քեմալի հետ կը ստորագրէր բարեկամութեան ու գործակցութեան դաշինքը: Ըստ Անգարայի համաձայնութեան Ֆրանսան ու Քեմալականները կ'որոշէին դադրեցնել բոլոր տեսակի պատերազմական գործողութիւնները ու Ֆրանսան կ'ընդունէր հեռանալ Կիլիկիայէն, պահելով միայն Ալեքսանտրէղի Սանճազը:

Անգարայի համաձայնութեան ստորագրութեամբ, Ֆրանսան՝ մոռնալով իր նախկին խոստումները, ամբողջութեամբ կ'անտեսէր 1919-20, Կիլիկիա վերահաստատուած հայութեան ինքնավար պետութիւն մը ունենալու ակնկալութիւնները:

Յունուար 1922-ին, ամբողջ շրջանը կ'անցնէր Քեմալական տիրապետութեան ներքեւ:

## 8. ԿԻԼԻԿԻՈՅ ԿՈՐՈՒՍՏԻՆ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Հազարամեակներու ներկայութենէ ու քանի մը հարիւրամեակներու պետական գոյութենէ ետք, Հայ ժողովուրդը կը կորսնցնէր չքնաղ Կիլիկիան: Հայկ Նահապետին սկզբնական ընտրութեան հետ բաղդատած, Կիլիկիան, իր աշխարհագրական դիրքով ու տնտեսական անսահման կարելիութիւններով դրախտավայր մըն էր: Մինչ՝ դարերու տքնաջան աշխատանքով վաստակուած անհատական ու Չաքարիա Պզտիկեանի կազմած ազգապատկան կալուածներուն ցանկը, կարելի է նկատել՝ ընդհանուր կորուստին մէկ դոյզն մասնիկը:

## 9. ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1915-ի Հայկական Ցեղասպանութենէն վեց տարիներ ետք, Կիլիկիոյ զանգուածային պարպումը կարելի է նկատել մեր ազգային պատմութեան ամենէն աղիտալի շրջանը: Ցեղասպանութենէն ճողոպրած, Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ բազմադարեան պատմութիւն ունեցող բնիկ քրիստոնէայ ժողովուրդներէն թիով կարելորագոյնին մնացորդածը ստիպուած պիտի ըլլար լքելու իր երկիրը:

1921 Հոկտեմբեր 20-էն ետք, Կիլիկիան կը յանձնուէր Զեմալական Թուրքիոյ, հետեւեալ առազընթաց պատմական 35 օրերու ընթացքին.

- Հոկտեմբեր 20, 1921-ին կը ստորագրուէր Անգարայի համաձայնագիրը, Ֆրանսայի ու Թուրքիոյ միջեւ.
- Նոյեմբեր 5, 1921 Հայ Ազգային Պատուիրակութիւնը Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէր իր բողոքագիրը.
- Նոյեմբեր 9, 1921 հրամանատար Կուրոն կը փորձէր համոզել Հայերը որ չլքեն Կիլիկիան.
- Նոյեմբեր 14, 1921-ին ազգային երեք յարանուանութիւններու պետերը կը պատասխանէին թէ բաւարար ու հաւաստի ապահովական երաշխաւորութեանց բացակայութեան, չէին կրնար ժողովրդային կամքին դեմ ըլլալ.
- Նոյեմբեր 22, 1921 Ֆրանքլէն Պույոն եւ Համիտ Պէյ քրիստոնէաներուն կը ներկայացնէին իրենց ապահովական երաշխաւորութիւնները որ յաջորդ օրն իսկ կը յայտարարուէր պաշտօնապէս.
- Նոյեմբեր 23, 1921, Ֆրանքլէն Պույոն երեք յարանուանութիւններու հոգետր պետերը իր քով կը հրաւիրէր նոր խորհրդակցութեան մը, յայտարարելու համար նոյն հաւաստիացումները, առանց համոզիչ երաշխաւորութիւններու.
- Նոյեմբեր 24, 1921, Ֆրանքլէն Պույոնի ներկայացուցիչը վերջին փորձ մը կ'ընէր տարհանողելու Վեհափառ Հայրապետը նոյնաման անբաւարար ու անվատահելի հաւաստիացումներով.
- Նոյեմբեր 29, 1921, Սահակ Կաթողիկոս Ալեքսանտրէթէն կը յայտարարէր թէ վտանգաւոր պիտի ըլլար ընդդիմանալու ժողովուրդին բնագոյն փխող Կիլիկիան լքելու որոշումին ու խորհրդակցելէ ետք զանազան շրջաններու ազգային ղեկավարներուն հետ, կը յայտարարէր.

*«Իմ նստավայրս, Միսի մէջ, աւերակներու կոյտ մըն է: Ատանա կը գտնուիմ ժամանակաւորապէս, փոխադրուելու համար դէպի Սուրիա ուր հօտիս թիւր նոյնքան բազմաթիւ է որքան էր Ատանայի նահանգին մէջ: Իմ խնդրանքս, ինչպէս նաեւ՝ Կիլիկիոյ գերագոյն կոչն է, ամէն զինով փրկել հայ ժողովուրդի թանկագին*

*խլեակները, գտնել ապահով ապաստանարան մը, ապահովել անոնց հանապազորեայ հացը, մինչեւ որ Աստուած, նոր արարչագործութեամբ մը, անոնց ապահովէ փրկութեան նոր արքայութիւն մը: Եթէ մենք՝ Կիլիկեցիք պիտի մեռնինք, առնուազն մեռնինք հեռուն, շատ հեռուն, որպէսզի չյաջողինք մեր արիւնով ու ոսկորներով ատելի դարձնել մեր ժողովուրդին՝ մեր պաշտելի Կիլիկիան:»*

*«Չեմ հաւատար թէ մեր նախաձեռնութիւնները արդիւնաւետ ըլլան, սակայն՝ ապաւինինք զուրթին, թակենք ողորմութեան դուռը մինչեւ անոր խորտակուիմք. թերեւս անոնք բացուին, այս աշխարհի հօրներուն դռները, որոնք ժայրի նման կարծրացած են. թերեւս կակուղնան:»*

*«Աստուծոյ կամքով այսօր կը մեկնինք դէպի Սուրիայի Թրիփոլին, անկէ անցնելու համար Հալէպ: Կը փափաքիմ որ այս ճամբորդութիւնս մօտեցնէ զիս՝ իմ դամբարանիս:»*

Արդեօ՞ք, այդ պատմական շրջանին, մեր ազգային ղեկավարութիւնը կրնա՞ր ու պէ՞տք էր տարհանոգել ցեղասպանութեան արհաւիրքէն ճողոպրած ժողովուրդը, որպէսզի չլքեր իր երկիրը: Թէական հարձադրում մը, որ կրնայ առանցին համագումարի մը նիսքը ըլլալ, եթէ նկատի առնենք այժմ Թուրքիոյ զանազան քաղաքներուն ու շրջաններուն մէջ վերապրող Հայերուն կեանքի մակարդակն ու Հայաստան-Թուրքիա նոր փոխ-յարաբերութիւններու, ըստ երեւոյթին՝ միջազգային ու շրջանային պետութիւններու կողմէ Հայաստանի Հանրապետութեան պարտադրուած, վտանգաւոր ու վիճելի ուղեցոյցը:

Մինչ այդ՝ «Հայութեան ներկայութիւնը Ատանայի մէջ» կը շարունակուի իր ազգային գերեզմանոցի բազմադարեան աճիւններով որոնց վրայ տեղադրուած են արդի Թուրքիոյ, Սապանճի Մշակոյթի պալատը՝ իր կողքին ունենալով արդարադատութեան պալատը, որպէս անարգանք Կիլիկիոյ Հայութեան յիշատակին ու թրքական ոսպնավարական հեռատեսութեան խորհրդանիշ:

*Ճարտարապետ՝ Մկրտիչ Լ. Պուլտուքեան,  
Պէյրութ, Հոկտեմբեր 26, 2009*